

Այժմեան բնակիչները թուրքեր են. 71 տուն, 248 ար. 258 իգ. միասին 506 հոգի: Պարապմունքը նոյնն է:

Ղարաղոյինու Փոքր.—(63° 30' 15"—40° 9' 10"): Մի փոքրիկ աննշան գիւղ է, 28 տուն թուրք բնակչով, 140 ար. 113 իգ միասին 253 հոգի:

ՄԱՋՐԱՅԻ ԳԻՒՂ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ-Մաղրա.—(63° 25' 45"—40° 13' 10").—Տեղաւորուած է գեղեցիկ հարթութեան վրայ, համանուն գետի ափին: Բռնում է 15 դ. 864 ք. ս. տարածութիւն: Այժմ համանուն համայնքի կենտրոնական գիւղն է. կան մի երկու կանոնաւոր տուն, մնացածները շատ հասարակ են:

Հնումը Մաղրան եղել է մելիքանիստ, այստեղ 1601 թ. Մելիք Շահնազարը հիւրնկալել է Շահ-Ապասին և նրանից մելիքութեան պաշտօնի մէջ վերահաստատուել:

Նախկին շինութիւններից մնացել են մատրան և մի եկեղեցու հիմնապատեր, հարիւրից աւելի խաչարձաններ՝ մասամբ ցրուած, մասամբ էլ խմբուած մի ընդարձակ գերեզմանատան մէջ:

Գիւղի արեւելեան ծայրում, ուր երբեմն բարձրացել է մի փոքրիկ մատուռ, դեռ ևս կանգուն է մի հազարամեայ սև խաչքար՝ 3 մետր բարձրութեան, և 1,25 մետր լայնութեան, կրելով հետեւեալ արձանագրութիւնը.

ՅԼ (==881) թուականութեանս տանս Հայոց ես Գրիգոր Ամիր Ներսէհ և տանս Սիւնեաց և Աղուանից իշխան կանգնեցի սուրբ Նշանս աւգնականութիւն հաւատացելոց, որք երկրպագէք սուրբ խաչին Քրիստոսի զիս յաղաթս յիշեցէք:

Այս խաչքարի մօտ կայ մի ուրիշ, հասարակ խաչքար՝ վայր ընկած, որի մէջքին գրուած է.

Ես Ամիրդատս կանգնեցի տապանս հաւր իմոյ Գորգայ, մաւր իմոյ Մամշահի: Ով կարդէք յաղաթս յիշեցէք:

Եկեղեցին գտնուում է գիւղի հարաւային կողմում, այժմ կիսաւեր՝ իբր յարգանոց է ծառայում: Այնտեղ մնում են միայն հետեւեալ երկու արձանագրութիւնները.

Արևմտեան պատի մէջ ամրացրած մի խաչքարի վրայ.

Որդիք Փիրհամզին կանգնեցաք խաչերս բարեխաւս ծնողաց մերոց. Աստուծով. եղբարքս Սատիս, Նղիշայ

քահանայս, Կոստանդ, Աղարէկ. թվ. 22Ը. (=1539 թ. Ք.).

Հարաւային պատի մէջ ներքուստ ամրացրած մի խաչքարի վրայ.

Կամաւն Աստուծոյ ես Միրզաճան կանգնեցի սուրբ խաչս բարեխաւս Տէրունի քահանային, որ էր սա տէր տանս Գեղամայ:

Այս եկեղեցու մօտ կան մի քանի խաչքարեր, որոնցից մի-նի վրայ կարդացուած է.

Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխոս մեծ իշխան Մէլիք-Բէգին. հարազատի հանգուցեալ Հախնազարին. յամի նեղութեան Շահթահմազին: Սա փոխեցաւ առ Քրիստոս արհի եպիսկոպոս Տէր-Մէլիքիսէթին ձեռամբ:

Գերեզմանատունը տարածուած է գիւղի հիւսիս-արեւմտեան կողմը: Տապանաքարերը մեծ մասամբ խաչքարեր են, կանգնեցրած քառանկիւնի մեծ քարերի արեւմտեան կողմը: Տապանաքարերից ուշագրաւ են այստեղի մեկիքական տան անդամներինը.

Մի մեծ, գեղեցիկ խաչքարի վրայ.

Ի թվին Հայոց Ռիշ (=1578). կամաւն Աստուծոյ մեք հինգ եղբարքօ, ես, պարոն Մէլիք-Շահնազարս, Մա-յիլ պկս, Տաթլու պկս, Միրզայ պկս, Մեքում պկս, և մայր մեր Խանում Աղէս կանգնեցաք զխաչս բարեխոս հաւրն մերոյ Մէլիք էլիկ¹⁾ պկին.

Սրա մօտ կայ մի խաչքարի պատուանդան, իսկ խաչքարը չկայ Գեր. Սմբատեանի ասելով սա եղել է մէլիք Շահնազարինը, գիւղացիները վերցրել, ով գիտէ ինչ բանի վրայ իբր քար գործածել են. ես շատ հարց ու փորձ արի, շատ որոնեցի, բայց չգտայ: Գեր. Սմբատեանի ասելով սա կրել է հետեւեալ տապանաքիրը.

Այս է հանգիստ պարոն Մէլիք Շահնազարին. որ էր սա տէր և իշխան երկրիս Գեղամայ. մեծաշուք և աստուածասէր իշխան էր սա. բարւոք ծերութեամբ փոխեցաւ առ Քրիստոս ի թագաւորութեան Շահապասին. թվին ՌՄԷ (=1606 թ.):

Սրա մօտ մի ուրիշ գերեզմանաքար կայ՝ որ յայտնում է.

¹⁾ Նկատելի է, որ անունը ջնջուած է, և նրա տեղը էլիկ փորագրուած:

Այս է հանգիստ պարոն Եաւրի պէկին որդի պարոն Մէլիք Շահնազարին, որ անողորմ մահուամբ փոխեցաւ առ Քս. և եթող դառն սուգ:

Սրա մօտ՝

Այս է հանգիստ մէլիք Քամալ պկին, որդի մէլ. Շահնազարին. թվ. ՌՀ (=1621):

Սրան կից կայ մի ուրիշ գերեզմանաքար՝ հետեւեալ տապանազրով.

Այս է հանգիստ Գիջիխանին, կողակից Աւրի պկին, հարս մէլիք Շահնազարին ՌՀ թվին (=1621 թ.):

Մեծ Մաղրայի այժմեան բնակիչները շիա և սիւննի թուրքեր են, մօտ հարիւր տարի առաջ Ղազախի և Ղարաբաղի գիւղերից դաղթած. ընդամէնը՝ 205 տուն, 938 ար. 904 իգ. միասին 1842 հոգի: Այստեղ է բնակուում այս գաւառի շիաների դաղին, որի ջանքերով այժմ շինուում է մզկիթ: Ութ տարուց ի վեր էլ այստեղ բացուած է պետական միդասեան դպրոց: Բնակիչները պարապուում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Գոլուած է այստեղի ցորենը: Ունին 2365 դ. 536 ք. ս. վարելահող, 199 դ. 795 ք. ս. խոտատեղի և 827 դ. 1460 ք. ս. արօտատեղի:

Այստեղի կանայք ևս գործում են կապերտներ և գորգեր:

Փորք Մազրա.—(63° 23' 8"—40° 15' 40"). Տեղաւորուած է մի հարթութեան վրայ, որի միջով անցնում է Գեօզ-սու (Կապույտ-ջուր) գետակը: Բռնում է 29 դ. 400 ք. սաժէն տարածութիւն: Կիւղում կայ մի կիսաւեր, անսիւն եկեղեցի առանց մի որևէ արձանադրութեան: Այժմեան բնակիչները շիա թուրքեր են, Բորչալուից եկած, 147 տուն, 947 ար. 711 իգ. միասին 1658 հոգի: Պարապուում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1366 դ. 1372 ք. ս. վարելահող. 310 դ. 480 ք. ս. խոտատեղի և 1161 դ. 1368 ք. ս. արօտատեղի: 3 դ. 2140 ք. սաժէն էլ բռնում են ջրանցքները:

Սուլթան-Ալի-Ղըշաղի կամ Ղըշաղ.—(63° 30' 5"—40° 16' 23").

—Մի աննշան, թրքաբնակ գիւղ է, որ բռնում է 4 դ. 1740 ք. ս. տարածութիւն: Ունի 77 տուն բնակիչ 213 ար. 209 իգ. ի միասին՝ 422 հոգի: Պարապուումը նոյնն է: Ունին 1026 դ. 1400 ք. ս. վարելահող, և 779 դ. 1240 ք. ս. արօտատեղի: Զարգացած է, մանաւանդ, անասնապահութիւնը:

Շիշ-Կայա.—Ղարա-Դաղ, Շիշ-Կայա, Մառալ-Դաղի և Ղոճա-Դաղ սարերը կիսաշրջան են կազմում, և ընդգրկում Շիշ-Կայա գիւղը,

որի միջով հոսում է մի գետակ, սկիզբն առնելով Շիշ-Կայա սարից: Գիւղում կայ նաև մի յորդ աղբիւր: Գիւղը իւր անունն ստացել է մօտակայ սարից, իսկ սա այսպէս է կոչուել, որովհետև դադաթին բարձրանում է մի սուր, շի նմանութեան ժայռ: Գիւղի մէջ կայ մի մեծ բլուր, որի վրայն կատելի են շինութեան հետքեր. տեղացիները դրան «դարաուլ-երի» — պահակատուն են կոչում: Գիւղի առջև, մօտ 3 կիլոմետր տարածութեամբ, մինչև լճափը ձգւում է մի գեղեցիկ դաշտավայր, ուր կայ մի կիսաւեր փոքրիկ եկեղեցի: Սրա մէջ կայ մի մեծ խաչքար եղծուած տապանադրով, որից որոշեցի միայն 2 (1251) թուականը: Մի մեծ եկեղեցու հիմնապատեր էլ մնացել են գիւղի մէջ. սրա շուրջը դեռ ևս կանգնած են մի քանի խաչքարեր՝ ԺԶ դարից:

Գիւղի գրեթէ կենտրոնում, հրապարակի մէջ տեղում բարձրանում է մի սիւն, որի վրայ դրնւում է երկու դաստակ, մինը դէպի հարաւ՝ միւսը դէպի հիւսիս դարձրած, սրանց ներքև ծածանում է մի դրօշակ: Սա Ալիի ձեռքի նշանակն է համարւում և այստեղ են խմբւում գիւղացիները միասին աղօթելու, որովհետև մզկիթ չունին: Բնակիչները շիա այրում են, յայտնի չէ թէ երբ են դաղթել այստեղ. ընդամէնը 140 տուն են, 520 ար. 521 իգ. միասին՝ 1041 հոգի: Պարապում են անասնապահութեամբ և երկրագործութեամբ:

Քնասման. — (63° 23' 50" — 40° 17' 25"). — Ընկած է Գէօյ-սու լեռան ստորոտում, համանուն գետի ափին: Մի փոքրիկ, անշնան գիւղ է, որ բռնում է 11 դ. 1250 թ. ս. տարածութիւն: Բնակիչները շիա թուրքեր են Ղազարի համանուն գիւղից գաղթած. ընդամէնը 85 տուն, 359 ար. 354 իգ. միասին՝ 713 հոգի: Պարապմունքը նոյնն է: Ունին 680 դ. 1450 թ. ս. վարելահող և 471 դ. 1150 թ. ս. արօտատեղի:

Գէօյ-սու. — Թրդարնակ մի փոքրիկ գիւղ է Շիշ-Կայա լեռան ստորոտում, համանուն գետակի ափին, հիմնուած է մօտաւորապէս 15 տարի առաջ: Բնակիչները գաղթել են Երևանի գաւառի Ղարա-սու գիւղից. ընդամէնը 23 տուն են, 121 ար. 112 իգ. միասին՝ 233 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ:

Օղրուջա. — (63° 26' 40" — 40° 17' 10"). — Տեղաւորուած է համանուն լեռան ստորոտում, որից և ինքը ստացել է իւր անունը. իսկ վերջինս այդպէս է կոչոււմ, որովհետև նրա վրայ շատ ռոգրի՝ — գողեր են ապաստանում: Գիւղի միջով անցնում է մի գետակ՝ Օղրուջա լեռից սկիզբն առնելով: Գիւղը բռնում է 7 դ. 1632 թ. ս. տարածութիւն: Գիւղում դեռ ևս մնում են հայկական

մի եկեղեցու հիմնադրատեղի և մի բանի խաչարձանները Բնակիչները շիա թուրքեր են. 134 տուն, 522 ար. 511 իգ. միասին 1033 հոգի: Պարապմունքը նոյնն է: Ունին 1594 դ. 123 ք. ս. վարելահող և 221 դ. 211 ք. ս. արօտատեղի:

Ինսի.—(63° 31'—40° 14' 25").—Տեղաւորուած է համանուն լեռան լանջին, և բռնում է 6 դ. 256 ք. ս. տարածութիւն: Գիւղն այսպէս է կոչուել որովհետեւ այդ լեռան վերայ ինակ մառար, էգ (կով) եղջերու շատ է եղել: Գիւղի միջով անցնում է մի փոքրիկ վտակ: Գիւղում կայ մի աւեր, հայկական եկեղեցի: Բնակիչները շիա թուրքեր են, 84 տուն, 261 ար. 259 իգ. միասին 520 հոգի: Պարապմունքը նոյնն է: Ունին 1249 դ. 1472 ք. ս. վարելահող և 1369 դ. 1510 ք. ս. արօտատեղի:

Ձօղ.—(63° 31' 40"—40° 12' 5").—Հնումը կոչւում էր Սոս կամ Սոթք, հաւանօրէն «սակա հանապազորդեան բքոց և դռնաշունչ օղոցն» ըստ Օրբելեանի: Սա այս վիճակի գլխաւոր և անուանատու աւանն է եղել և մինչև անգամ ԺՁ դարի (1578 թուին) մի յիշատակարանում «մայրաքաղաք» կոչուել: Այստեղ բնակող Սոդացի տոհմը ազգային բանակին միայն 50 մարդ է տուել, հետեւապէս և՛ փոքր տոհմ է եղել: Վիճակը այս տոհմի անուամբ Սոդէից գաւառ ևս կոչուել է, ինչպէս նաև «Արտից գաւառ», գուցէ բազմաթիւ արտեր ունենալու պատճառով, որովհետեւ մի ընդարձակ, գեղեցիկ դաշտավայր է ներկայացնում:

Ձօղ գիւղը, 20 դ. 1179 ք. ս. տարածութեամբ, փռուած է մի դաշտավայրի վրայ և երեք կողմից շրջապատուած է լեռներով, որոնցից շարունակ փչում է քամի: Գիւղի միջով հոսում է մի գետակ, որ սկիզբն է առնում Ռմբասար լեռից: Գիւղի մէջ կայ մի բլուր, հարթ գագաթով, որի վրայ այժմ կանգնած է միայն մի խաչքար, հետեւեալ տապանադրով:

Ես Ազիրս կանգնեցի զխաչս յիշատակ ինձ և ամուսնուս Աղաւնիս. թվին 2ԻԳ (—1274):

Գիւղի կենտրոնում գտնւում է հայկական մի կիսաւեր եկեղեցի և սրանից փոքր ինչ արեւմուտք՝ մի ընդարձակ գերեզմանատուն:

Եկեղեցին սրբատաշ քարով շինուած օրօրոցաձև մի շէնք է, չորս սիւներով և ռոմանական կամարներով: Ունի երկու խորան: Երևում է 1276 թուին, ինչպէս վկայում է հարաւային պատի վրայի արձանագիրը:—

Ի Թաղաւորութեան Ապաղին, կաթողիկոսութեան Տէր Ստեփաննոսի, և պարոնութեան Հասանայ, աւգնա-

կանութեամբ ամուսնոյն իմոյ Մամբանայ, ես անարժան, Առաքելս շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ամուսնոյն իմոյ և զաւակաց մերոց և ծնողաց մերոց:

Եկեղեցու մէջ, հիւսիսային պատում, աւազանի մօտ կայ մի կամարակապ, բոլորաձև ներսանկուածք, ուր դրուած մի քանակիւնի գերեզմանի վրայ կարդացուած է.

Այս է հանգիստ Ղուկաս վրդպետին. Գանձասարու առաջնորդ Թվին ՌՂԶ. (=1647).

Այս գերեզմանի մօտ, պատին կից կանգնեցրած են երեք խաչքարեր, որոնց վրայ գրուած է.

Ա.-ի վրայ. Աստուած ողորմի Տէր Սահակին.

Բ.-ի վրայ. Աստուած ողորմի Ամիր Սուլթանին.

Գ.-ի վրայ. Աստուած ողորմի Ռստակէսին:

Եկեղեցու հարաւային պատին կից դրուած են մի քանի հին խաչքարեր՝ որոնցից երկուսի վրայ կան հետեւեալ տապանազրեր.

Աստուած ողորմի Թէոդորոսին: Կամաւն Աստուծոյ մեք Տէրունս եղբարքս իմ Վարդանէսն վաստակեցաք խաչերս բարեխաւս ծնողաց մերոց Թվ. ՋՂԶ (=1547).

Աստուած ողորմի Շահգաղին Թվ. ՋՂԹ (=1550):

Գերեզմանատանը եղած տապանաքարերից ուշագրաւ են երեք կոթողները՝ իրենց գեղեցիկ շէնքով և 2 խաչքար՝ իրենց մեծութեամբ:

Այս երեք կոթողներից երկուսը այժմ տեղափոխուած են Կովկասեան Թանգարանը, իսկ մինը՝ այդ տեղափոխման միջոցին կտրուել է:

Սրանցից առաջին խաչքարի վրայ գրուած է.

Կամաւն Աստծոյ ես Յակոբս կնկցի զսրբ խաչս բրխս ծնողացն իմ Իպային Անհային. Թվ. ՌՁԷ (=1638).

Բ. խաչքարի վրայ.

Շնորհօքն Աստուծոյ ես այտին Պալասանս Դաւլաթ բէկս ածպաւս ծառայք Աստուծոյ կնկցուցաք սրբ խաչս բարեխաւս ծնողաց մերց Քամալին եւ Փարին, Յոլտանին, Մանպուբին. Թվին ՌՃԲ (=1653).

Գ. խաչքարի վրայ.

Յանուն Աստուծոյ ես Ուլուխանս, ես Սալբուտս, ես

Գասպարս որդի տր Մելիքսէթին կանկնեցուցաք սրբ խաչս բարեխս տր Մելիքսէթին, կողակցին Իւրումին Պապին Ղասումին թվ. ՌՃԲ (=1653).

Դ. խաչքարի վրայ.

Ես մեղապարտս չարագործ Զոհրապս կանգնեցի զխաչերս. ով կարդէք մեզ ողորմած լերուք. եւ հարսնե-
րուն իւրեան Եփրոյսիմին և Ոսաւարինդին:

Զորս արշին բարձրութեան և երկու արշին լայնութեան մի խաչքարի վրայ:

Կամաւն ամենակալին Աստուծոյ ես Միրաննէս (?) կանգնեցի զխաչս իշատակ հաւր իմոյ Անաւորին. իշե-
ցէք 'ի Քրիստ. թվին ՌՃԼԳ (=1684).

Մի վայր ընկած խաչքարի վրայ.

Հայոց թուին ՌԺԷ (=1568). Փաթշահութեան Շահ-
թահմազին կանգնեցաք խաչերս փրկութեան հոգւոյն Ուլուբէկին իւր աւրհնեալ ննջեցելոցն ձեռամբ պարոն տր Գրիգորէս եպիսկոպոսին եղբաւր որդի Մէլիք Աղայ բէ-
կին:

Մի ուրիշ վայր ընկած խաչքարի թիկունքին.

Շնորհօքն Աստուծոյ ես Պետրոս վարդապետ, Գրի-
գոր եպիսկոպոս, Մելիք Միրզախանս որդիք պարոն Մէ-
լիք բէկին, թոռն Մէլիք Պալասանին կանգնեցաք սուրբ
խաչս փրկութեան հոգւոյ Ստեփաննոս Արհի եպիսկոպո-
սին հօր եղբօր հաւուն մերոյ, ով ընթեռնոյք յաղաթս
յիշեցէք. թվ. ՌՃԾ (=1701)

Գիւղի արևելեան կողմը ձգուող ձորակում ևս նկատելի է
մի ընդարձակ գերեզմանատուն, միայն այժմ մնում են մի քանի
գերեզմանաքարեր՝ արտերի մէջ ընկած:

Զօդի այժմեան բնակիչները շիա և սիւննի թուրքեր են,
ընդամենը 199 տուն, 863 ար. 854 իգ. միասին՝ 1717 հոգի:
Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ու-
նին 2049 դ. 388 ք. ս. վարելահող, 1370 դ. 1627 ք. ս. արօ-
տատեղի:

Զարգիւթիւր. (63°33' 45"—40°11').—Տեղաւորուած է Մեծ Գիւնէյ
լեռան լանջին՝ Գիւլլի գետի վտակներից մինի ափին, որի վրայ
մի լաւ կամուրջ է ձգուած նոյն գիւղացի մի թուրքի ծախսով:
Սակայն այժմ քանդուած է: Գիւղը բռնուած է 9 դ. 1200 ք. ս.

տարածութիւն, որից 8 դ. 1200 թ. ս. գտնուում է շինութիւնների տակ: Գիւղում եղել է մի հայկական եկեղեցի, որ այժմ քանդել են և տեղը կալ դարձրել. սրա մօտ կան 3 խաչքար, որոնցից մինի վրայ գրուած է.

Կանգնեցաւ սուրբ խաչս Աւանէսին. թվին ԶԿԳ
(=1514 թ.),

Ուրիշ ուշագրաւ բան չկայ գիւղում: Այժմեան ընակիչները շիա թուրքեր են Նոր-Բայազէտի Ղուլալի գիւղից գաղթած, 96 տուն. 487 ար. 476 իգ. իմիասին՝ 963 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 596 դ. 1492 թ. ս. վարելահող, 300 դ. 1088 թ. ս. արօտատեղի: Եւ որովհետեւ ցրտի պատճառով այստեղի հացահատիկները շատ չեն բարձրանում, և շատ տեղեր էլ քարքարոտ լինելով առակելապէս ոչ թէ գերանդիով են հնձում այլ մանգաղով քաղում, այս պատճառով էլ տղամարդիկ չեն կարողանում հասցնել և կտնանցնել էլ են քաղել տալիս: Մեծ մասամբ դարի են ցանում: Բնակիչներից շատերը գնում են զանազան կողմեր մշակութիւն անելու:

Աղ-քիլիսա.—(63°32'5"—40°10'51").—Տեղաւորուած է մի դաշտի մէջ. ունի միայն մի աղբիւր. դարնանը և աշնանը մի բարակ վտակ հոսում է Քարվանսարայ կոչուած բլրից, մի ջրանցք էլ Զարդիբիլ գիւղից ջուր էր բերում, սակայն այժմ զարդիբիլցիները թոյլ չեն տալիս, այնպէս որ գիւղացիները ջրի մեծ նեղութիւն են կրում:

Գիւղն իւր անունն ստացել է մի սպիտակաւոյն հայկական հին եկեղեցուց, որ գտնուում է նրա արեւելեան կողմում: Եկեղեցին սակաշէն է, անսիւն, երեք արաբական կամարներով, թաղակապ: Խորաններ չունի: Արեւմտեան պատը և այս կողմից մինչև առաջին կամարն ամբողջովին քանդուած են: Եկեղեցու հարաւային դրան կամարակալ քարի վրայ արձանագրուած է.

'Ի թագաւորութեան Աբազ շահին 'ի պարոնութեան Ամիրխան սուլթանին ի կաթողիկոսութեան յովնից տէր Յոհաննիսի. կամաւն Աստուծոյ ես Յոհաննէս նուաստ վրդպտս շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն հոգի մոյ և կրկնակի ծնողաց իմոց որք երկրպագէք յղթս յիշեցէք առ Բրիստոս:

Դռնից փոքր ինչ արեւը, բարձրում, եղել են երեք քար, արձանագրութեամբ ծածկուած, որ այժմ պոկուել, ընկել են վայր.

մի քիչ ժամանակ ևս, և սրանք էլ կը գործածուեն գիւղացիներէ շինութիւնների մէջ: Արձանագրութիւնը թուական հունի և հետեւեալն է.

Կամաւք և ողորմութեամբ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, արդեւ Յոհաննէս վարդապետս որդի Մելքոնին՝ որդւոյ Միրզաշանին որդւոյ Ջանշահի յորդւոյ Պռոշոյ՝ յորդւոյ Հասանայ որդւոյ մեծ Շահնշահի՝ որդւոյ Սարգսի, թոռնեայն Դոփայ, քոյր մեծին Իւանէի և օպասալար Զաքարէի. հանդերձ հարազատ եղբաւր որդւովք իմովք Աթանաս եպիսկոպոսիւ և Գրիգոր եպիսկոպոսիւ յոյժ ջանիւ և մեծ յուսով և բազում փափազանաւք շինեցաք զսուրբ Աստուածածինս բարեխաւս և փրկութիւն հոգւոց մերոց և ծնողաց իմոց Մելքոնին և Փիանդին և բազմերայտ ուսուցանողին իմոյ Յոհաննէս րաբունապետին, որոց ողորմի ասացէք. որք հանդիպէք աղաչեմ. Աստուած ողորմի ամենայն հաւատացելոց և մեզ և ծնողաց մերոց. Ամէն:

Եկեղեցու կտրանը մի մեծ գերեզմանաքար է ձգուած, վերան մի մարդու պատկեր քանդակուած. այս քարի վրայ մի ծակ է արած և վերան մի մեծ, երկու մետրանոց սև, քառանկիւնի խաչքար ամրացրած, գեղեցիկ խաչերով զարդարուած և շուրջը գրուած.

ԹՎ. ՌՂԲ. (=1643). Սրբ. Նշանս բարեխաւս Յաթանաս եպոսին և Գրիգոր եպոսին:

Եկեղեցու արևելեան կողմը, փոքր ինչ հեռու կայ մի ընդարձակ գերեզմանատուն, ուր կանգնած խաչքարերի վրայ կարդացուած են.

Չ¹/₂ մետր բարձրութեան և մի մետր լայնութեան մի խաչքարի վրայ.

Կամաւն Աստուծոյ. ես Յուսէն կանգնեցի սուրբ Նշանս ի փրկութիւն հոգւոյ եղբաւր իմ Հասիկա և այլոցն... ծնողաց իմոց. որք երկիրպագէք խաչիս ի սուրբ յաղաթս յիշեցէք. ի թՎ. ՉԽԴ (=1295)

Մի օրօրոցածև տապանաքարի մի երեսին քանդակուած է մի ձիաւոր, մի քիչ հեռու մի եղջերու՝ կանգնած մի վիշապի վը-

րայ, ինչպէս նաև մի մարդ՝ կանգնած մի ուրիշ վիշապի վրայ։ Երկրորդ երեսի վրայ մի մարդ՝ թառածելիս, կողքերին հացեր և դաւ։ Շուրջը գրուած է.

Այս է հանգիստ Քասպարին որդի պարոն Ամիրջէճանին, թոռն մեծին Գրճհանշին. թվ. 229 (=1534) էր-
փից Գ. որք հանդիպիք յիշեցէք ի Դս։

Այս արձան ներկեալ յարեամբ փրկչական վասն Ռըս-
տակէս քհնին հոգոյն փրկութեան.

Յանարժան Բաղդասար Մէլիկպէկ կազմող։

Այս խաչքարի մօտի խաչքարի վրայ.

Սուրբ խաչս բարեխաւս Ղզրլին. կանգնեցաւ Ռստա-
կէս քհնին եւ դստերց Խոբնին եւ Խնաորմին (") թվին
ՌՃԷ. ին (=1658)

Մի խաչքարի վրայ.

Թվին ՌՃԷ (=1658) էր. ի կամակցութեամբ Աստու-
ծոյ և հոգեբարձութն Գրիգորի... բաշ բաբունոյ հօր եղ-
բօր մերոյ ես նուաստ ներսէս էրէցս և եղբայրս իմ
Պաղի որդիք Արիստակէս քհնին որդոյ Թումա քհնյին
որդոյ պրն Մեղքոնին թոռին մեծին Զահնշին յուսով մե-
ծաւ կանգնեցաք զսրբ խաչս ի փրկութիւն հոգոյ հօրն
մերոյ.

Գիւղի հարաւային կողմում ևս կայ մի գերեզմանատուն,
որտեղի խաչքարերը և տապանաքարերն արդէն գիւղացիները տա-
րել շինութիւնների վրայ գործածել են։

Գիւղի այժմեան բնակիչները շիա թուրքեր են, մի մասը
Նոր-Բայազէտի Բաշքեանտ, միւսը Գոմաձորից 1830 թուին գաղ-
թած։ Ընդամենը 69 տուն են, 89 ար. 84 իգ. միասին՝ 173 հոգի։

ՋԻԼԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ջիլ—(62° 7'—40° 27' 17")— Տեղաւորուած է Շահ-դաղ լե-
րան և սրա ճիւղ Տանա և Հաճի-Մալիք կոչուած սարերով կազ-
մուած հովտում, լճից մօտ 3 կիլոմետր հեռու։ Գիւղի միջով հո-
սում է մի գետակ՝ Աղ-սոււ անունով, որ բղխում է Շահ-դաղ լե-
րան ստորոտից։ Գիւղում կայ հայկական չորս աւեր եկեղեցի,
որոնցից մինը բաւական մեծ է, և միայն պատերի կէսն է մնա-
ցել. ունի մի, աշակողմեան, խորան. սեղանի երկու կողմը կան